ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գողթ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

16.08.2012թ գ. Գողթ

2012թ օգոստոսի 16-ին տեղի ունեցավ Գողթ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
Համայնքի ավագանու անդամներ՝

1. Ալեքսան Մովսիսյան
2. Լևոն Հարությունյան
3. Մաքսիմ Մարտիրոսյան
4. Գարեգին Ղարիբյան
5. Դավիթ Թադևոսյան
6. Սամվել Գալստյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Ոստանիկ Խաչատրյան
2. Սիրակ Հովսեփյան
3. Աբել Ղարիբյան
4. Աղվան Կարապետյան
5. Արեգնազ Կարապետյան
6. Թամարա Կարապետյան
7. Էմին Ղարիբյան
8. Տիգրան Պետրոսյան

Համայնքի բնակիչներ՝ 120

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը

2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Հակոբյանի զեկուցումը

Ա. Հակոբյանը ողջունեց ավագանու անդամներին և ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին, ապա շնորհակալություն հայտնեց նրանց համայնքում առկա խնդիրներիքննարկմանը մասնակցելու համար:

- Այսօր մենք հավաքվել ենք ևս մեկ անգամ խոսելու վերջին մեկ տարում կատարված աշխատանքների մասին, ինչպես նաև քննարկելու առաջիկայում մեր նոր անելիքների հարցերը:

Ուրախալի է, որ անցկացված 1 կմ ջրագծին կարողացանք ավելացնել ևս 1,5 կմ: Գյուղի զարգացման ծրագրի շրջանակներում մեծ հաջողություններ նոր թաղամասի էլեկտրիֆիկացման իրականացումը, ինչպես նաև գազիֆիկացումից դուրս մնացած մեկ այլ թաղամասում գազատարի անցկացումը, որի աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:
Նախորդ տարիների համեմատ հաջողություններ ենք գրանցել հողի հարկի, գույքահարկի, վարձավճարների և մնացած հարկային պարտավորությունների գործում:
Ցավոք, թերությունները շարունակում են պահպանվել քաղաքաշինության բնագավառում: Պետք է ասեմ, որ բազմիցս զրուցել եմ այդ ոլորտում ապօրինի շինություններ կառուցած բնակիչների հետ, առաջարկել նրանց համապատասխան ժամանակացույց սխալները շտկելու համար:

ՏԻՄ ընտրություններին ընդառաջ, պարոն Ա. Հակոբյանը կոչ արեց համայնքի բնակիչներին ակտիվորեն մասնակցել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների առաջիկա ընտրությանը:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ժողովին հնչեցին բնակիչների ելույթներ, ովքեր նախ շնորհակալություն հայտնեցին կատարված աշխատանքների համար և խոստացան այսուհետ նույնպես ակտիվորեն մասնակցել համայնքի զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացին:

ՈՐՈՇՎԵՑ՝

հաշվետվությունն ընդունել ի գիտություն

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան